Հավելված
ՀՀ Ազգային ժողովի նախագահի
2010 թվականի մայիսի 25-ի
թիվ Կ-93-Ա կարգադրության

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) անցկացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատակարգը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), սույն աշխատակարգով և իրավական այլ ակտերով:

3. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնում է Հանձնաժողովի կազմի հաստատման պահից:

4. Հանձնաժողովի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը՝ Աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

ա) Աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթներին Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության համար հավասար պայմանների ապահովումը՝ Օրենքին, իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան,

անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից.

բ) մրցույթի թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը:

6. Հանձնաժողովը իր հիմնական խնդիրներից ելնելով՝

ա) Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումից ստանում է մրցույթին մասնակցելու համար դիմողների ներկայացրած փաստաթղթերը, Հանձնաժողովի կնիքը, տվյալ թափուր պաշտոնի անձնագրի օրինակը, ինչպես նաև թեստավորում անցկացնելու համար անհրաժեշտ՝ դիմորդների թվին համապատասխան թվով կնքված ամփոփաթերթերը.

բ) մինչև թեստավորման փուլի սկիզբը իր գումարած նիստում քննության է առնում փաստաթղթերի ճշտությունը, ամբողջականությունը և մրցույթն սկսելուց առաջ ընդունում է որոշում՝ դիմողներին մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու մասին.

գ) մինչև թեստավորում սկսելն ստուգում և կնքում է ամփոփաթերթերի ու քվեարկության համար նախատեսված արկղերը.

դ) սահմանված կարգով կազմում է թեստեր՝ թեստավորման փուլն անցկացնելու համար.

ե) անցկացնում է մասնակիցների թեստավորում.

զ) ստուգում և գնահատում է մասնակիցների թեստավորման առաջադրանքները.

է) ամփոփում և հրապարակում է թեստավորման արդյունքները.

ը) քննության է առնում մասնակիցների՝ թեստավորման արդյունքների հետ կապված բողոքները և ընդունում համապատասխան որոշումներ.

թ) հրապարակում է մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակը.

ժ) ընդունում է որոշում՝ հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին.

ժա) մասնակիցների հետ անցկացնում է հարցազրույց.

ժբ) կազմում է քվեաթերթեր.

ժգ) հարցազրույցից անմիջապես հետո անցկացնում է քվեարկություն.

ժդ) քվեարկության արդյունքում յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ ընդունում է որոշում.

ժե) ամփոփում է մրցույթի արդյունքները.

ժզ) անցկացնում է քննարկումներ մրցույթի անցկացմանն առնչվող հարցերի շուրջ.

ժէ) պաշտոնապես հրապարակում է մրցույթի արդյունքները.

ժը) մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ներկայացնում է եզրակացություն՝ հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին.

ժթ) Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանն է հանձնում Հանձնաժողովի կնիքը, ինչպես նաև թեստավորումն անցկացնելու համար ստացված, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը և մրցութային փաթեթը.

ի) իրականացնում է Օրենքով, սույն աշխատակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

8. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

9. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

10. Հանձնաժողովի անդամի կողմից մրցույթի անցկացման կարգի խախտման դեպքում Հանձնաժողովն այդ մասին ընդունում է որոշում, որի պատճենն անմիջապես ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին:

11. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի կարգադրությամբ կարող է դադարեցվել Հանձնաժողովի՝ խախտում թույլ տված անդամի գործունեությունը:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

12. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները.

բ) վարում է Հանձնաժողովի նիստերը.

գ) կազմակերպում է թեստեր կազմելու աշխատանքները՝ համաձայն սահմանված կարգի.

դ) իրականացնում է հսկողություն թեստավորման աշխատանքների նկատմամբ.

ե) հարցազրույցի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը.

զ) որոշում է մրցույթի հետ կապված հարցերի, դիմումների, բողոքների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով Հանձնաժողովի անդամների հետ.

է) իրականացնում է Օրենքով, սույն աշխատակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

13. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) արձանագրում է Հանձնաժողովի նիստերը, մասնակիցների հետ անցկացվող հարցազրույցը.

բ) մասնակիցներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը.

գ) հայտարարում է թեստավորման սկիզբը.

դ) իրականացնում է Օրենքով, սույն աշխատակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

14. Հանձնաժողովի անդամը՝

ա) վարում է նիստերը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.

բ) իրականացնում է հսկողություն՝ թեստավորման աշխատանքների նկատմամբ.

գ) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և մասնակիցներին տալիս հարցեր.

դ) բարձրաձայն հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելու մասին, իսկ սխալ պատասխանի դեպքում տալիս է ճիշտ պատասխանը.

ե) մասնակցում է հարցազրույցից հետո հանձնաժողովի՝ յուրաքանչյուր մասնակցի համար անցկացվող քվեարկությանը՝ քվեարկելով կողմ կամ դեմ.

զ) ստորագրում է մրցույթի մասին եզրակացությունը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին գրառում է «Հատուկ կարծիքը կցվում է» բառերը.

է) ծանոթանում է նիստերի արձանագրություններին.

ը) իրականացնում է Օրենքով, սույն աշխատակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

15. Հանձնաժողովը կնիքը և չօգտագործված ամփոփաթերթերը, ինչպես նաև մրցութային փաթեթը Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը հանձնելուց հետո դադարեցնում է իր գործունեությունը:

16. Հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ